ԿԱՐԾԻՔ

Դավիթ Զավենի Մարկոսյանի «Շրջանաձև բիզնես-մոդելների ներդրման հեռանկարները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայում արտադրվող սննդամթերքի մեկ երրորդը կորչում կամ վերածվում է թափոնների, ինչը ոչ միայն սպառնալիք է պարենային անվտանգության ու սննդի ապահովման համար, այլեւ մեծացնում է ճնշումը բնական ռեսուրսների վրա: Կորչած կամ թափոնների վերածված սննդամթերքի արտադրության համար օգտագործվող էներգիան կազմում է էներգիայի ընդհանուր սպառման 10 տոկոսը, իսկ դրա հետ կապված տարեկան ջերմոցային գազերի արտանետումները կազմում են 3,5 գիգատոն CO_2 -ի համարժեքով:

Վերամշակումը թափոնները երկրորդային օգտագործման նյութի վերածելու գործողություն կամ գործընթաց է: Վերամշակումը սկսվում է արտադրանքի կենսապարբերաշրջանի վերջում՝ արտադրանքից «ազատվելու» փուլում: Շրջանաձև տնտեսությունը, (որը հայտնի է նաև «փակ պարբերաշրջանի տնտեսություն», «բազմաշրջանառու տնտեսություն» անվանումներով) սակայն, վերադառնում է հենց սկզբին, որպեսզի կանխի թափոնների և աղտոտման առաջացումը: Մեր ընթացիկ բնապահպանական մարտահրավերների պայմաններում վերամշակմամբ հնարավոր չի լինի հաղթահարել արտադրված հսկայական քանակի թափոնները:

Շրջանաձև տնտեսության հայեցակարգը մարտահրավեր է նետում արտադրության և սպառման ավանդական գծային մոդելին, որը հիմնված է ռեսուրսների արդյունահանման, արտադրանքի թողարկման, դրա օգտագործման, այնուհետև՝ թափոնների օգտահանման վրա: Շրջանաձև տնտեսության նպատակն է՝ օգտագործման համար հնարավորինս տևական ժամանակ պահպանել նյութերն ու արտադրանքը, նվազեցնել թափոնները և աղտոտվածությունը, ինչպես նաև վերականգնել բնական համակարգերը: Կիրառելով շրջանաձև մոտեցում՝ բիզնեսները կարող են ստեղծել արժեք, իրականացնել նորարարություններ և զարգացնել մրցակցային առավելությունները, ինչպես նաև նպաստել բնապահպանական և սոցիալական կայունությանը:

Պատշաճ կառուցված շրջանաձև տնտեսության մեջ ավելի շուտ հարկավոր է կենտրոնանալ այն բանի վրա, որպեսզի հնարավոր լինի խուսափել վերամշակման փուլից: Թափոնների առաջացումը կանխելը միակ իրատեսական ռազմավարությունն է:

Հատկապես կարևորվում է սննդի թափոնների հիմնախնդիրը: Համաձայն Food Waste Index Report 2024-ի՝ 2022 թվականին աշխարհում դեն է նետվել 1 միլիարդ տոննայից ավելի սննդամթերք՝ մանրածախ, սննդի սպասարկման և տնային տնտեսությունների հատվածներում՝ միասին վերցրած: Սա կազմում է տարեկան 132 կիլոգրամ մեկ շնչի հաշվով, որից 79 կիլոգրամը մեկ շնչի հաշվով վատնվել է տնային տնտեսություններում: Հայաստանի ցուցանիշը, միայն տնային տնտեսությունների հատվածում, կազմել է 102 կիլոգրամ կամ տարեկան 282.2 հազար տոննա: Ենթադրաբար՝ այդ կորուստների նշանակալի մասը պայմանավորված է սննդարդյունաբերության ոլորտում ավանդական բիզնես-մոդելների առկայությամբ և այլ խնդիրներով:

Չնայած հիմնախնդրի կարևորությանը, այն դեռևս համապարփակ ուսումնասիրված չէ, ինչն էլ պայմանավորում է հետազոտության արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակի՝ ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես-մոդելների հեռանկարների բացահայտման և դրանց ներդրման կառուցակարգերի մշակման ուղիների առաջադրման համատեքստում, ատենախոսը ձևակերպել և լուծել է հետևյալ հիմնական խնդիրները.

- գնահատվել են տնտեսության գծային մոդելի հիմնական ռիսկերն ու թերությունները.
- բացահայտվել են շրջանաձև տնտեսության մոդելի և կայուն զարգացման միջև գոյություն ունեցող կապերը,
- բացահայտել են ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես-մոդելների զարգացման խոչընդոտները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսական հետազոտությամբ ստացված գիտական արդյունքներից որպես նորույթ է ներկայացվել հետևյալը.

- ԵՄ-27 երկրների պանելային տվյալների էկոնոմետրիկ վերլուծությամբ գնահատվել են շրջանաձև տնտեսության և կայուն զարգացման ցուցանիշների միջև գոյություն ունեցող կապերը, որոնց հիման վրա ներկայացվել են ՀՀ սննդարդյունաբերության ոլոր-

տում շրջանաձև բիզնես մոդելները խթանող քաղաքականության բարելավման հիմնական ուղիները.

- բացահայտվել են ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների ներդրման խնդիրները, որի հիման վրա, Fuzzy-DEMATEL մեթոդաբանությամբ կառուցվել է դրանց հիերարխիան՝ ըստ ազդեցության չափի.
- մշակվել են սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների ներդրման կառուցակարգեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածական մասում ատենախոսն անդրադարձել է թեմայի արդիականությանը, ներկայացրել հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության մեթոդաբանությունը և պաշտպանության ներկայացվող նորույթը: Ատենախոսության կառուցվածքը համահունչ է հետազոտության նպատակից բխող խնդիրներին:

«Շրջանաձև բիզնես մոդելների ներդրման տեսական հիմքերը և սկզբունքները համաշխարհային մարտահրավերների պայմաններում» գլխում, ատենախոսն ընդարձակ աղբյուրների հիման վրա անդրադարձել է սննդարդյունաբերության ոլորտի համաշխարհային զարգացումներին, ներկայացրել գծային տնտեսության ռիսկերը, ինչպես նաև հիմնավորվել է շրջանաձև տնտեսության անցման տեսական հիմքերը և սկզբունքները: Ատենախոսը եզրակացրել է, որ «սննդի մատակարարման շղթայի գրեթե բոլոր օղակներում գծային տնտեսության տարրերը դեռևս գերիշխող են՝ դրանից բխող բնապահպանական և սոցիալական մի շարք հետևանքներով»:

«ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի վերլուծությունը և շրջանաձև բիզնես մոդելների ներդրման անհրաժեշտությունը կայուն զարգացման համատեքստում» գլխում, ատենախոսը հիմնավորվել է ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև տնտեսության ներդրման անհրաժեշտությունը: ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև տնտեսության ձևավորման հնարավորությունը և անհրաժեշտությունը գնահատելու համար կատարվել կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն: Մասնավորապես, բացահայտվել է սննդամթերքի արտադրության և թափոնների առաջացման միջև ուղիղ համեմատական կապ, ինչը, ըստ ատենախոսի՝ արտադրական գործընթացների անարդյունավետության, թափոնների վե-

րամշակման կառուցակարգերի բացակայության կամ թերի կառավարման արդյունք կարող է հանդիսանալ:

Աշխատանքի այս հատվածում ներկայացվել են ԵՄ 27 երկրներին առնչվող պանելային կառուցվածքի առաջնային արժեքավոր հավաքագրված տվյալներ, որոնց հիման վրա կառուցվել է ֆիքսված էֆեկտով մոդել, որի բնութագրերը վկայում են դրա ադեկվատության մասին:

«ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև բիզնես մոդելների ներդրման խնդիրները և դրանց լուծման ուղիները» գլխում ներկայացվել են, մասնավորապես, մրգի ու բանջարեղենի վերամշակման ոլորտում շրջանաձև բիզնես-մոդելների ներդրմանը և դրա հետ կապված խոչընդոտների հաղթահարմանն առնչվող առաջարկություններ: Գիտագործնական հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի մշակած բազմաչափ որոշումների կայացման (Fuzzy Decision-Making Trial and Evaluation Laboratory -DEMATEL) մոդելը, ինչը հնարավորություն է ընձեռում իրականացնելնելու գործոնային փոխադարձ ազդեցությունների վերլուծություն բարդ համակարգերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսական հետազոտության շրջանակներում ստացված արդյունքները, դրանց հիման վրա մշակված առաջարկությունները կարող են գործնական նշանակություն ունենալ ինչպես ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում շրջանաձև տնտեսության ձևավորման պետական քաղաքականության մշակման, այնպես էլ գործարար հատվածում դրա կարևորության ու շահավետության ըմբռնման տեսանկյունից: Ըստ էության, խոսքը վերաբերում է մոտավորապես 300 հազար տոննա սննդի թափոններին, որոնք, մի կողմից, ավելի են բարդեցնում երկրի պարենային անվտանգության հիմնախնդիրը, իսկ մյուս կողմից՝ տնտեսական ու բնապահպանական նշանակալի վնասներ են պատճառում ինչպես տնտեսավարող սուբյեկտներին, այնպես էլ, ընդհանուր առմամբ, հասարակությանը և պետությանը: Միաժամանակ, աշխատանքում տեղ գտած տեսական ընդհանրացումները կարող են հիմք հանդիսանալ գիտության այս բնագավառում հետագա հետազոտությունների համար:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աշխատանքում հանդիպում են որոշ թերությունները, որոնք հիմնականում հետևյալն են.

1. Գիտական նորույթի ձևակերպումները հստակ չեն և չեն արտացոլում հետազոտությամբ ստացված արդյունքները:

2. Կասկածահարույց է շրջանաձև բիզնես-մոդելների ներդրման խոչընդոտների շրջանակը, մասնավորապես, B1՝շրջանաձև տնտեսության անորոշ սահմանումը: Կարծես, ՄԱԿ-ի 2015 թ. գագաթաժողովում ընդունված «Նպատակները Կայուն զարգացման բնագավառում» փաստաթղթում առկա այդ սահմանումը:
3. Աշխատանքն ավելի կշահեր, եթե անդրադարձ կատարվեր շրջանաձև տնտեսությանն առնչվող ISO միջազգային ստանդարտների շարքին. ISO 59010:2024 Circular economy — Guidance on the transition of business models and value networks; ISO 59020:2024 Circular economy — Measuring and assessing circularity performance; ISO 59004:2024 Circular economy — Vocabulary, principles and guidance for implementation.
4. Աշխատանքն ավելի շահեկան կլիներ, եթե անդրադարձ կատարվեր սննդի արդյունաբերությունում "Lean manufacturing"-ի սկզբունքների կիրառմանը, նկատի ունենալով այն, որ "lean manufacturing"-ը պարզապես ծախսերի խնայողության ռազմավարություն չէ, այլ ուղղակիորեն կապված է կայունության, շրջակա միջավայրի, էթիկայի և հանրային հաշվետվողականության խնդիրների հետ:
5. Աշխատանքի 97 էջում ատենախոսը նշում է. We searched the Web of science, Scopus and Google Shcolar databases using the following strings: Հեղինակը, ըստ էության, նկատի է ունեցել Բուլիան օպերատորը (Boolean operator). հետևաբար՝ արտահայտությունը պետք է լիներ. ...using the Boolean operator:
6. Տեխնիկական թերություններից աչք են զարնում գծապատկերների և աղյուսակների ոչ միատիպությունը, անհասկանալի ոչ ընկալելի ձևավորումը՝ չափերի առումով, աշխատանքի տեքստից չտարբերվող տառաչափը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները, այդուհանդերձ, չեն նվազեցնում ատենախոսական հետազոտության շրջանակներում ստացված արդյունքները:

Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրատարակվել են միջազգային նշանակություն ունեցող՝ գրախոսվող գիտական հրատարակություններում (Web of Science և Scopus շտեմարաններում) և ԲԿԳԿ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակությունում:

Սեղմագիրը և հրապարակված աշխատանքները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, բնութագրում են կատարված հետազոտության արդյունքները:

Ատենախոսության հիմնական արդյունքերն ամփոփվել են 5 գիտական աշխատանքներում, որոնք հրապարակվել են միջազգային նշանակություն ունեցող՝ գրախոսվող գիտա-

կան հրատարակություններում և ԲԿԳԿ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակություններում:

Ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությանը: Աշխատանքը համապատասխանում է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող պահանջներին, հանդիսանում է ավարտուն հետազոտություն:

Դավիթ Զավենի Մարկոսյանի՝ «Շրջանաձև բիզնես-մոդելների ներդրման հեռանկարները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսությունը բավարարում «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերի չափանիշներին. կարող է գնահատվել իբրև տնտեսագիտության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում և կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տնտեսական մշակում: Ատենախոսն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Գ. Ի. Վարդանյան
16 դեկտեմբեր, 2024 թ.

Պրոֆեսոր Գ. Ի. Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական խորհրդի քարտուղար

Մ. Վ. Հովհաննիսյան
«17» 12 2024 թ.